## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

Ճշտված

«ՏՄՆՀՏՍՀ-ԳՀ ԱՊՁԲ-19/08» ծածկագրով գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Նոյեմբերյան <<05>> <<մարտ>> 2019թ.,

ժամը 10:00

Մասնակցում էին՝

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Գրետա Ղազինյան

Անդամներ՝ Ա. Հարությունյան

Ա. Հասրաթյան

Քարտուղար՝ Իրինա Անանյան

Օրակարգ

Ընթացակարգի հաղթող ճանաչված մասնակիցների մասին

1.1 Հաշվի առնելով, որ «ՏՄՆՀՏՍՀ-ԳՀ ԱՊՁԲ-19/08» ծածկագրով գնման ընթացակարգի 2-րդ և 4-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած <<Հովհաննես Ջանվելյան>> ԱՁ-ի, 3-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած <<Ժակ և Գոռ>> ՍՊԸ-ի հարկային պարտավորությունների ստուգման համար ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե կատարված հարցմանը երեք աշխատանքային օրվա ընթացքում ստացել է պատասխան, այն է՝ <<Հովհաննես Ջանվելյան>> ԱՁ -ի և <<Ժակ և Գոռ>> ՍՊԸ-ի ֆինանսական միջոցները համապատասխանում են հրավերի պահանջներին: <<Հովհաննես Ջանվելյան>> ԱՁ -ն և <<Ժակ և Գոռ>> ՍՊԸ -ն սահմանված կարգով ներկայացրել են հրավերով պահանջված որակավորման չափորոշիչները հիմնավորող փաստաթղթերը և որոնք համապատասխանում են հրավերի պահանջներին:

1.2 «Գյորգի Քոչարյան» ԱՁ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի 12 800 (տասներկու հազար ութ հարյուր) ՀՀ դրամի ժամկետանց հարկային պարտավորություն: <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն գնումների ընթացակարգին մասնակցության իրավունք չունեն այն մասնակիցները, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ: Քանի որ «Գյորգի Քոչարյան» ԱՁ-ի ժամկետանց հարկային պարտավորությունը /12 800 ՀՀ դրամ/ գերազանցում է իր ներկայացրած գնային առաջարկի 1 տոկոսը /7050 ՀՀ դրամ/, սակայն մեկ աշխատանքային օրվա ընթացքում <<Գյորգի Քոչարյան>> Ա/Ձ-ի կողմից 01.03.2019թ.-ին գնահատող հանձնաժողովին առձեռն ներկայացվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից տրամադրված տեղեկանք, ըստ որի Ա/Ձ-ն հայտը ներկայացնելու օրը չունի հարկային մարմինների կողմից վերահսկվեղ եկամուտների գծով որևէ պարտավորություն: <<Գյորգի Քոչարյան>> Ա/Ձ-ի մոտ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ առկա ժամկետանց հարկային պարտավորությունը առաջացել է <<ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին>> ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշների վճարման գծով: Եվ հաշվի առնելով, որ Գնումների հետ

հիմնավորմամբ բավարարվել են ներկայացված բողոքները և որոշում են կայացվել դադարեցնել բողոքաբեր ընկերությունների հայտերը մերժելու մասին գնահատող հանձնաժողովի որոշումները՝ ժամկետանց պարտավորությունները դրոշմանիշների վճարների գծով առկա լինելու հիմքով, քանի որ ըստ բողոքը քննող անձի՝ առկա է Ընկերությունների իրազեկված չլինելու հանգամանքը, ինչի ուժով հայտը պետք է գնահատվի բավարար, գնահատող հանձնաժողովը <<Գնումների մասին>> ՀՀ օրենսդրության պահանջներին համաձայն որոշեց.

ա/ «ՏՄՆՀՏՍՀ-ԳՀ ԱՊՁԲ-19/08» ծածկագրով ընթացակարգի 2-րդ և 4-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից է համարվում <<Հովհաննես Ջանվելյան>> ԱՁ-ն, որին սահմանված կարգով կառաջարկվի կնքել համապատասխան պայմանագիր: 3-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից է համարվում <<Ժակ և Գոռ>> ՍՊԸ-ն, որին սահմանված կարգով կառաջարկվի կնքել համապատասխան պայմանագիր, 1-ին և 5-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից է համարվում «Գյորգի Քոչարյան» ԱՁ-ն, որին սահմանված կարգով կառաջարկվի կնքել համապատասխան պայմանագիր:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ- 0

5. Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները, ազգանունները – ստորագրությունները.

Հանձնաժողովի

Նախագահ Գ. Ղազինյան

Անդամ Ա. Հարությունյան

Ա. Հասրաթյան

Քարտուղար Ի. Անանյան